ՀՀ ՓՊ խորհրդի 09.03.2013թ. ընտրությունների վերաբերյալ

06.03.2013 11:54

Միաժամանակ հայտնում ենք, որ 2013 թվականի մարտի 5-ին, ժամը 11:00-ից մինչև 19:10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատում (այսուհետ՝ Պալատ) տեղի է ունեցել Պալատի խորհրդի անդամների 09.03.2013թ. ընտրությունների քվեաթերթիկների և ընտրողների ցուցակների տպագրությունը:

Տպագրության գործընթացին ներկա են գտնվել Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ապետնակ Պողոսյանը, Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար Իրինա Փիլոյանը, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ՀԿ անդամ Նելլի Հարությունյանը, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության CEELI Inc.-ի Հայաստանյան ներկայացուցչության ավագ իրավաբան Արման Խաչատրյանը (այսուհետ՝ Դիտորդներ): Քվեաթերթիկների տպագրության գործընթացին որևէ թեկնածու կամ թեկնածուի վստահված անձ ներկա չեն եղել:

Տպագրվել է 1418 հատ քվեաթերթիկ (1376 հատ՝ ըստ ընտրողների ցուցակի՝ 05.03.2013թ. դրությամբ, և 42 հատ՝ ընտրողների ցուցակի ոչ պակաս երեք տոկոս չափով), որոնք ընտրողների ցուցակների հետ միասին կնքվել են Հաշվիչ հանձնաժողովի կնիքով և փաթեթավորվել են պարկերում: Պարկերը ստորագրվել են Հաշվիչ հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և գործընթացին ներկա գտնվող Դիտորդների կողմից, կնքվել են և Հաշվիչ հանձնաժողովի կնիքի հետ միաժամանակ տեղադրվել են չհրկիզվող պահարանում, որը պատշաճ կարգով կնքված կապարակնիքով փակվել է:

Հարգանքով

Հաշվիչ հանձնաժողովի

Նախագահ Ապետնակ Պողոսյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })